

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՌ ԱՐԱՐԱՏԻ

**ՎԱՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊԱՀԱՐԿՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
XVI-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ**

**Է 00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար պ.գ.դ. Պ.Ա. Չոբանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ
պ.գ.դ., պրոֆեսոր
Հ.Գ. Մարգարյան
պ.գ.թ. Բ.Պ. Կոստիկյան

Առաջատար կազմակերպություն Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. նոյեմբերի 25-ին, ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հոկտեմբերի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար պ.գ.թ. Ռ.Պ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վանական հողատիրության և ապահարկության իրավունքի ուսումնասիրությունը գիտական կարևոր նշանակություն ունի Վրաստանում եկեղեցու ունեցած դերի, քաղաքական և տնտեսական գործընթացների ուսումնասիրության տեսանկյունից: Վանական հողատիրության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու քննվող ժամանակաշրջանում Վրաստանում ավատատիրական կարգերի յուրահատկությունները, լուսաբանելու վանական ավատատիրական կարգերի, կալվածքների և ճորտերի նկատմամբ իրավունքների առանձնահատկությունները, ներկայացնելու եկեղեցու ունեցվածքի տեսակները, դրանց ձեռքբերման և պահպանման եղանակները:

Արևելյան Վրաստանում ապահարկության ինստիտուտի ուսումնասիրության, վրաց հարկային համակարգի քննության, վանքապատկան կալվածքների, ճորտերի և այլ ունեցվածքի նկատմամբ ապահարկության իրավունքի կիրառման առանձնահատկությունների հետազոտությունը կարևոր է եկեղեցու և պետության փոխհարաբերությունների ուսումնասիրության համար:

XVI մինչև XVIII դդ. կեսերը Արևելյան Վրաստանը բաժանված էր երկու քաղաքական առանձին պետական միավորների՝ Քարթլիի և Կախեթի թագավորությունների, սակայն հոգևոր իշխանության տեսանկյունից երկրի այս երկու հատվածները, ինչպես նաև մինչև XVII դ. սկիզբը Սամցխեի աթաբեկությունը, գտնվում էին Մցխեթի կաթողիկոսության հովվության շրջանակներում. ըստ այդմ կարևոր նշանակություն է ստանում Արևելյան Վրաստանում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև փոխհարաբերությունների ուսումնասիրությունը: Արևելյան Վրաստանի՝ Իրանի գերիշխանության տակ անցնելուց հետո կարևոր է Իրանի շահերի և Մցխեթի կաթողիկոսության միջև ձևավորված նոր հարաբերությունների առանձնահատկությունների վերլուծությունը:

Հայ և վրացի ժողովուրդների միջև պատմականորեն ձևավորված կապերը, Արևելյան Վրաստանում Հայոց եկեղեցու ներկայացված լինելու, ինչպես նաև Վրաստանում Հայոց եկեղեցու և նրա կալվածքների առկայության հանգամանքը ևս շեշտում են թեմայի արդիականությունը և կարևորությունը հայագիտության համար:

Գտնվելով Իրանի, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի շահերի բախման կիզակետում՝ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վրաց եկեղեցու՝ որպես հոգևոր կառույց և որպես ավատատեր Վրաստանի քաղաքական կողմնորոշումների հարցում դրսևորած դիրքորոշումը, քանի որ նշյալ բոլոր

կողմերի հետ հարաբերություններում եկեղեցին նպատակ ուներ ապահովելու իր հոտի և ունեցվածքի անվտանգությունը:

Հետազոտության խնդիրներն ու նպատակները: Թեմայի համապարփակ կատարման համար ընտրվել են հետևյալ նպատակները՝

- Ուսումնասիրել Արևելյան Վրաստանում վանական հողատիրության բնույթն ու էությունը, ձևերն ու առանձնահատկությունները, վերհանել դրա զարգացմանը նպաստող և խոչընդոտող գործոնները:
- Ուսումնասիրել հոգևոր և աշխարհիկ իշխանության՝ մի կողմից Վրաց եկեղեցու և Արևելյան Վրաստանի տեղական գահակալների, մյուս կողմից Իրանի գերիշխանության տակ ընկած ժամանակահատվածում Իրանի շահերի և Մցխեթի կաթողիկոսության միջև ձևավորված փոխհարաբերությունները:
- Յույց տալ եկեղեցու և աշխարհիկ իշխանության փոխհարաբերությունների ազդեցությունը վանական հողատիրության զարգացման վրա:
- Ամփոփ ներկայացնել վանքապատկան կալվածքների և ունեցվածքների տեսակները և չափերը, դրանց ձեռքբերման և պահպանման եղանակները:
- Ուսումնասիրել վանքապատկան անձնական կախվածության մեջ գտնվող մարդկանց՝ ճորտերին և եկեղեցու հպատակ ազնվականների դասը, ներկայացնել վերջիններիս կարգավիճակի տարբերությունները Վրաստանի ավատատիրական կարգերի շրջանակներում:
- Ուսումնասիրել Արևելյան Վրաստանի հարկային համակարգը՝ քննության ենթարկելով և՛ պետական, և՛ եկեղեցական հարկերի տեսակները:
- Ուսումնասիրել Արևելյան Վրաստանում ապահարկության իրավունքի էությունը, դրա պատմական զարգացումն ու կիրառման առանձնահատկությունները, վերհանել ապահարկության ունեցած ազդեցությունը վանքապատկան կալվածքների և ճորտերի տնտեսական դրության վրա:
- Ներկայացնել Արևելյան Վրաստանում վանական հողատիրության շրջանակներում այլ հոգևոր կառույցների՝ Հայոց եկեղեցու, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի ուղղափառ պատրիարքությունների տեղը, ունեցած կալվածքների և ունեցվածքների տեսակները և մոտավոր չափերը:
- Համեմատական վերլուծությամբ ներկայացնել վանական հողատիրության տարբերությունները վրացական և հայկական միջավայրում, Հայոց և Վրաց եկեղեցիների ու Իրանի շահերի միջև փոխհարաբերությունների առանձնահատկությունները:

- Ներկայացնել Վրաց եկեղեցու իրավասությունները և լիազորությունները երկրի վարչական և դատական համակարգերում, ինչպես նաև դերն ու տեղը ռազմական գործի կազմակերպման մեջ:
- Համակողմանի ուսումնասիրությամբ ներկայացնել Արևելյան Վրաստանի տնտեսական և քաղաքական կյանքում ունեցած Վրաց եկեղեցու դերը:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է Արևելյան Վրաստանում վանական հողատիրության և ապահարկության իրավունքի, դրանց պատմական զարգացման և եկեղեցու ունեցած դերի բազմակողմանի և ամփոփ վերլուծության մեջ: Թեման առանձին հետազոտության առարկա չի դարձել և պատմագրության մեջ խնդրո առարկա թեմայով ամբողջական աշխատանք գոյություն չունի:

Ատենախոսության մեջ աղբյուրագիտական նյութի վերլուծության հիման վրա ուշագրավ փաստեր են բացահայտվել վանքապատկան ունեցվածքի տեսակների, չափերի և աշխարհագրական տեղաբաշխվածության, ապահարկության իրավունքի ձևերի և կիրառության վերաբերյալ: Մասնավորապես պարզվել է, որ XVI-XVIII դարերը հանդիսացել են Արևելյան Վրաստանում վանական հողատիրության առավել զարգացման ժամանակաշրջանը: Բացահայտվել է, որ վանքապատկան կալվածքները լայնորեն օգտվում էին ապահարկության իրավունքից, իսկ պետական հարկերից ապահարկված կալվածքներից Վրաց եկեղեցին շարունակում էր գանձել նույն հարկերը: Պարզվել է, որ նաև XVI-XVIII դդ. ընկած շրջանում Արևելյան Վրաստանում Վրաց եկեղեցին ձեռք էր բերել բավական մեծ ինքնուրույնություն և իրավասություններ, բարձրացել էր նրա դերակատարումը և կարևորությունը աշխարհիկ իշխանության համար:

Աշխատանքում ներկայացվել են նաև Արևելյան Վրաստանում Հայոց եկեղեցու ավատատիրական իրավունքները, նրա ունեցվածքի և կալվածքների վերաբերյալ սկզբնաղբյուրների հաղորդումները, հայկական և վրացական վանական հողատիրության առանձնահատկությունները:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն:

Ատենախոսությունը գրվել է հայերեն, վրացերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, պարսկերեն, ռուսերեն տարաբնույթ աղբյուրների և գրականության հիման վրա: Հետազոտության իրականացմանը զգալիորեն նպաստել են հրատարակված արխիվային փաստաթղթերի ժողովածուները, պատմական սկզբնաղբյուրները, հետազոտողների՝ քննարկված թեմային նվիրված արժեքավոր աշխատությունները, կովկասագիտական տարբեր պարբերականները:

Ատենախոսության համար սկզբնաղբյուր են ծառայել Վրաստանի ձեռագրերի Ազգային Կենտրոնի¹ և Մաշտոցի անվան Մատենադարանի վավերագրերը², Վրաստանի պատմության մի շարք մատենագրական աղբյուրներ՝ Քարթլիա Տխովրեբան³, Սումբատ Դավիթիսի⁴, Ջուանշեր Ջուանշերիանի⁵, Թեմուրազ Բագրատիոնի⁶, Դավիթ Բագրատիոնի⁷, Իոանե Բագրատիոնի⁸, Փարսադան Գորգիջանի⁹ աշխատությունները, Փարիզյան տարեգրությունը¹⁰, Անանուն տարեգրությունը¹¹, Մանր Ժամանակագրությունները¹², Գեորգի V-ի և Վախթանգ VI-ի օրենքների ժողովածուները¹³: Ուսումնասիրվող խնդիրների ամբողջական հետազոտության և հարակից երկրների պատմության համատեքստում համեմատական քննության համար օգտագործվել են նաև հայկական, իրանական, օսմանյան գրավոր աղբյուրները, որոնք են՝ Կիրակոս Գանձակեցու¹⁴, Մաղաքիա

¹ Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոն (այսուհետ ՎՁԱԿ), ֆոնդ HD, վավերագրեր № 1371, 1372, 1373, 1557, 2521, 1954, 15097, 14661 ա, 14661 բ, 1721:

² Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 252, վավերագրեր № 1, 2, 3, 6, 7, 11, 15, 22, 26, 27, 28, 29, 32, 35, 40, 43, 50, 51:

³ Քարթլիա Տխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, խմբ. Ի. Արուստան, Թբիլիսի, 1953; ქართლის ცხოვრება, ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით ს. ყაუხჩიშვილის მიერ, ტ. IV, თბილისი, 1973; Вахушти Багратиони. История царства грузинского, пер. Н. Накашидзе, Тбилиси, 1976.

⁴ Сумбат Давитисдзе, История и повествование о Багратионах, введение и примечания М. Лордкипанидзе, Тбилиси, 1979.

⁵ Джуаншер Джуаншериани, Жизнь Вахтанга Горгасала, введение и примечания Г. В. Цулая, Тбилиси, 1986.

⁶ თეიმურაზ ბაგრატიონი, ახალი ისტორია, ტექსტი გამოსაცემად მოამზადა, გამოკვლევა და სამიջვლები დაურთეს თ. მიქიაშვილმა, თბილისი, 1983.

⁷ Давид Багратиони, История Грузии, текст издал и снабдил вступительной статей и указателями А. Рогова, Тбилиси, 1971.

⁸ იოანე ბაგრატიონი, ქართლ-კახეთის აღწერა, ტექსტი გამოსაცემად მოამზადეს, გამოკვლევა და სამიჯვლები დაურთეს თ. ენუქიძემ და გ. ბედოშვილმა, თბილისი, 1986.

⁹ Парсадан Горгиджанидзе, История Грузии, пер. Р. Кикнадзе, В. Путуридзе, Тбилиси, 1990.

¹⁰ Парижская хроника, пер. Г. Аласаниа, Тбилиси, 1991.

¹¹ ჯამთაღმწერელი, ასწლოვანი მატთანე, ტექსტი გამოსაცემად მოამზადა, გამოკვლევა, შენიშვნები და ლექსიკონი დაურთო რ. კვიციანი, თბილისი, 1987; Анонимный грузинский "Хронограф" XIV века, пер. Г. Цулая, Москва, 2005.

¹² მცირე ქრონიკები, ტექსტები გამოსცა, შესავალი წერილი და კომენტარები დაურთო ჯ. ოდიშველმა, თბილისი, 1968.

¹³ დასტურლამალი მეფის ვახტანგ მეექვსისა, რედ. პ. უმიკაშვილი, ტფილისი, 1886; Сборник законов грузинского царя Вахтанга VI, под. ред. Д. Бакрадзе, Тифлис, 1887; Д. Пурцеладзе, Законы Вахтанга VI, Тбилиси, 1980; Д. Пурцеладзе, Уложение Георгия V-го Блистательного, Тбилиси, Мецниереба, 1988.

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

არბელაჟი¹⁵, Թովմა Մեծփեցու¹⁶, Առաքել Դավրիժեցու¹⁷, Չաքարիա Ագուլեցու¹⁸, Սիմեոն Երևանցու¹⁹, Սարգիս Ջալալյանցի²⁰, Ռաշիդ աղ-դինի²¹, Մուհամմադ Ռաֆի' Անսարիի²², Մալիք Շահ Սիստանիի²³, Էվլիա Չելեբիի²⁴ երկերը:

Արևելյան Վրաստանի վանական հողատիրության, վանքապատկան կալվածքների և ունեցվածքի տեսակների, ինչպես նաև ապահարկության երևույթի և հարկային համակարգի վերաբերյալ խիստ արժեքավոր նյութեր են ընդգրկված աստենախոսության աղբյուրագիտական հենքը հանդիսացող վավերագրերի՝ հրովարտակաների, վճիռների, կալվածագրերի, հավատարմության նամակների, հարկացուցակների ժողովածուներում: Դեռևս XIX դ. հրատարակված այդ երկերից են Ա. Բերძեի²⁵, Դ. Փուրցեվաճեի²⁶, Ա. Խախանաշվիլի²⁷, Թ. Ժորդանիայի²⁸, Ա. Տագարեվի²⁹ վավերագրերի ժողովածուները: Առավել արժեքավոր են XX-XXI դդ. հրատարակված վավերագրերի ժողովածուները, որոնք առանձնանում են Ա՛ նախորդ դարի հրատարակված վավերագրերի զգալի մասի ընդգրկումով, Ա՛ ծանոթագրությունների հագեցվածությամբ: Դրանք են Ի. Դոլիճեի³⁰, Ս.

¹⁵ Մաղաբիայ արբելաժի Պատմության վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870:

¹⁶ Թովմա Մեծփեցի, Պատմագրության, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999:

¹⁷ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1988:

¹⁸ Չաքարիա Ագուլեցու որագրությունը, պատ. խմբ. Ս. Տեր-Ավետիսյան, Երևան, 1938:

¹⁹ Սիմեոն Երևանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873:

²⁰ Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մասն Ա, աշխատասիրությամբ Սարգիս Ջալալյանցի, Տիֆլիս, 1842:

²¹ Фазлуллах Рашид ад-дин, Джами-ат-таварих, перс. текст, изд. А. Али-заде, пер. А. Арендса, т. III, Баку, 1957.

²² Мухаммад-Рафи' Ансари, Дастан ал-мулук, пер. А. Б. Вильданова, Ташкент, 1991.

²³ Малик Шах-Хусайн Систани, Хроника воскрешения царей, пер. Л. Смирнова, Москва, 2000.

²⁴ Эвлия Челеби, Книга путешествий, вып. 3, Земли Закавказья и сопредельных областей Малой Азии и Ирана, подг. Ф. Алиев, А. Желтяков, М. Зуляян, Г. Путуридзе, Москва, 1983.

²⁵ Акты собранные Кавказскою археологическою комиссиею, т. 1, т. 2, ред. А. Берже, Тифлис, 1866, 1868.

²⁶ Д. Пурцеладзе, Грузинские церковные гуджары, Тифлис, 1881; Д. Пурцеладзе, Грузинские крестьянские грамоты, крепостные и судебные акты, грамоты и письма грузинских и персидских царственных особ, Тифлис, 1882.

²⁷ Վ. խախանաշվիլու, Գուճրբու, շտոասու, 1891.

²⁸ Ժրոնոցեքու և ճեքա մասալա ճաքարտեղոս օստորոսու և մքերոլոնոս (1213 վուլոն 1700 վլամեդ), Մքերեքեղու, քրոնոլոգոլուրադ ճաչեքոնոլու և ճեքնոլու ո. քորճանոս մեդ, Շ. II, Գեղոլոսու, 1897.

²⁹ А. Цагарели, Грамоты и другие исторические документы XVIII столетия (1768-1784 годы), т. I, С. Петербург, 1891; А. Цагарели, Грамоты и другие исторические документы XVIII столетия (1768-1801 годы), т. II, вып. I, С. Петербург, 1898.

³⁰ քարտեղու ճամարտոլոս մեղեքեք, Շ. II, Շ. III, Գեքսեքեքեք ցամոսցա, Մեքնոնքեքեք և ճամեքեքեքեք և ճալուրու ո. ճոլոլեքեք, տեղոլոսու, 1965, 1970.

ყასყარაბაძის³¹, შ. მორიყაყის³², ლ. ასყანაყიძის³³, ი. ღასყარაბაძის³⁴, ს. მინაყარაბაძის³⁵, ჯ. ფაყაყასის³⁶ ჯანყაროყასამ ღრასარასყაბაძე ჭოღყაბაძისნერე: ნიასმასაყრძიღ ჯიღასის აყასმიოყასან, თნსნასყან ს. ჟაღყასყან იოიოყასნ მერყარყაყ კარსიო თნისსოიოყისნერე სნ აყაროინასყინ XVII-XIX იღ. იოისეოიოყისნერე³⁷: ჯნსაღოთოიოყასნ ჯიღასასყნერიოთ იოთაღოიოძყ სნ ღრნსგ იოთმასაყრძიოყისნერიოთ ჭმასყისს კასმ ღრასნიოთ მნსკიღ ღარგნერის ანიღარაღრბად მყასი ღნსაღოთოიოისერის აჯასათასნსნერე³⁸:

³¹ С. Какабадзе, Грузинские документы IX-XV вв., Москва, 1982; С. Какабадзе, Грузинские документы Института народов Азии, Москва, 1967.

³² Тбилисская коллекция персидских фирманов, т. I, подг. М. Тодуа, Кутаиси, 1995; Тбилисская коллекция персидских фирманов, т. II, подг. М. Тодуа, К. Шамс, Тбилиси, 1989.

³³ ლ. ასლამაზიშვილი, საქართველოს სოციალურ-ეკონომიკური განვითარება XV-XVIII სს-ში, ცენტრალური სახელმწიფო საისტორიო არქივში დაცული დოკუმენტების მიხედვით (მოლკე მიხიხილვა), თბილისი, 2005.

³⁴ ივ. ჯავახიშვილი, საქართველოს ეკონომიკური ისტორიის ძეგლები (XIII-XIX სს.), წ. 2, თბილისი, 1974.

³⁵ დოკუმენტები (საქართველოს სოციალური ისტორიიდან), რედ. ნ. ბერმენიშვილი, ტ. 2, თბილისი, 1953.

³⁶ შათნსაღარასის აყარსყნსნსს კასყნრაყრერე, აყათრასსნსგ ჯ. ფაყაყასის, აყრას ათაჯის (ძუ-ძღ იღ.), სრსას, 1956:

³⁷ И.А. Гильденштедт, Путешествие по Кавказу в 1770-1773 гг., Санкт-Петербург, 2002; И. Гюльденштедт, Путешествие по России и Кавказским горам, Осетины глазами русских и иностранных путешественников, Орджоникидзе, 1967; Записки Сергея Алексеевича Тучкова (1766-1808), ред. К. Военский, С.-Петербург, 1908; П. Зубов, Шесть писем о Грузии и Кавказе, Москва, 1834; А. Муравьев, Грузия и Армения, ч. 1, Санкт-Петербург, 1848; Путешествия русских послов XVI-XVII вв. (статейные списки), отв. ред. Д. Лихачев, Москва-Ленинград, 1954; П. Иосселиани, Путевые записки по Кахетии, Тифлис, 1846; Воспоминания барона А. П. Николая, Раскрепощение в Закавказском крае, прекращение крепостной зависимости в Тифлисской губернии, Русский Архив, книга 2, часть 5, Москва, 1892, стр. 91-126; J. Flannery, The Missions of the Portuguese Augustinians to Persia and Beyond (1602-1747), London, 2013.

³⁸ საქართველოს ისტორიული გეოგრაფიის კრებული, ტ. 6, თბილისი, 1982; საქართველოს ისტორიის ნარკვევები, რედ. მ. დუმბაძე, ტ. 4, თბილისი, 1973; რ. ერისთავი, ფოლკლორულ ეთნოგრაფიული წერილები, თბილისი, 1986; გ. აკოფაშვილი, სოციალური ურთიერთობის ისტორიიდან XV-XVIII სს. ქართლში, თბილისი, 1965; ვ. გაბაშვილი, ქართული ფეოდალური წყობილება XVI-XVII საუკუნეებში, თბილისი, 1958; ვ. გაბაშვილი, საუკუნის მეორე მეოთხედის ქართული დოკუმენტური მასალები როგორც წყარო მახლობელი აღმოსავლეთის სოციალურ-ეკონომიური ისტორიისათვის, თბილისის სახელმწიფო უნივერსიტეტის შრომები, ტ. 91, № II, თბილისი, 1960, გვ. 305-329; გ. პაიჭაძე, გეორგიევსკის ტრაქტატი, თბილისი, 1983; ე. კაჭარავა, საქართველოს პოლიტიკური დაშლის ისტორიისათვის, საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის მაცნე, 1987, № 3, გვ. 113-122; გ. მიძიური, ბეგრის მნიშვნელობისათვის „გავნელთა დაწერილობი“, საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის მაცნე, 1983, № 2, გვ. 80-90; გ. ყორანიშვილი, ქართული ფეოდალიზმის განვითარების ზოგიერთი თავისებურების შესახებ (IV-XII სს.), საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის მაცნე, 1981, № 4, გვ. 125-144; ედ. ხოშტარია (ბროსე), ფეოდალურ საქართველოში სამხედრო საქმის ისტორიის შესწავლისათვის

ქრისტიანული ხარისხი და უძველესი სოციალური ფორმის «Города и городской строй феодальной Грузии»³⁹, რ. ფიქსიძის «Из истории социальных отношений в позднефеодальной Грузии»⁴⁰, ა. შანიჭაძის «Очерки аграрной истории феодальной Картли-Кахети конца XVIII века»⁴¹, ს. ჩხეიძის «Очерк из истории развития феодальных отношений в Грузии»⁴² და სხვადასხვა სტრუქტურული

(ეკონომიკური ლაშქრის სოციალური შედეგების შესახებ), საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის მაცნე, 1981, № 4, გვ. 108-125; გ. აკოფაშვილი, ყმა, მსახური, ტაძრული (ისტორიულ-ტერმინოლოგიური მიხედვით), საქართველოს სსრ მეცნიერებათა აკადემიის მაცნე, 1981, № 2, გვ. 134-149; 1965; პ. იოსელიანი, Краткая история грузинской церкви, С. Петербург, 1843; Г. Калантаров, Крепостное право в Грузии в начале настоящего столетия, Тифлис, 1877; С. Багатуров, Личные и поземельные права в древней Грузии, выпуск 1, Тифлис, 1886; Еп. Кирион, Заслуги грузинского монашества и монастырей для отечественной церкви и общества, Тифлис, 1889; Е. Такашвили, Сигель грузинского царя Баграта IV (1027-1072), Записки Восточного отделения императорского русского археологического общества, т. IX, Санкт Петербург, 1896, стр. 61-69; М. Джанашвили, История Грузинской церкви, Обращение картвельцев, Тифлис, 1896; И. Джавахов, К истории церковных реформ в древней Грузии, Журнал министерства народного просвещения, часть СССЛ, Санкт-Петербург, 1904, стр. 358-373; К. Цинцадзе, Автокефалия церкви грузинской (исторический очерк IV-XI в.), Тифлис, 1905; И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, т. I, С.-Петербург, 1905; С. Авалиани, Крестьянский вопрос в Закавказье, т. IV, Тифлис, 1920; Д. Учанийшвили, К вопросу об экономическом развитии восточной Грузии во второй половине XVIII века, Материалы по истории Грузии и Кавказа, выпуск 5, стр. 323-428, Тбилиси, 1937; З. Анчабадзе, Очерки экономической истории Грузии первой половины XIX века, Тбилиси, 1966; И. Сургуладзе, История государства и права Грузии, Тбилиси, 1968; Р. Кикнадзе, Очерки по источниковедению истории Грузии: Парсадан Горгиджанидзе и Картлис Цховреба, Тбилиси, 1980; В. Челидзе, Исторические хроники Грузии, т. 1, пер. А. Беставашвили, Тбилиси, 1980; В. Челидзе, Исторические хроники Грузии, т. 2, пер. А. Беставашвили, Тбилиси, 1988; Э. Орджоникидзе, Эволюция аграрных отношений в Грузии, Тбилиси, 1983; В. Итонишвили, Социальная структура населения горной части Восточной Грузии в XIV-XVIII веках (Миулет и Гудамкари), дисс. канд. ист. наук, Тбилиси, 1984; И. Зетишвили, Георгий Мцире, Житие святого и блаженного отца нашего Георгия Святогорца, Символ, № 38, Париж, 1997, стр. 253-317; И. Зетишвили, Житие царя царей Давида, Символ, № 40, Париж, 1998, стр. 275-301; Столопописание святого и богособорного собора, стр. 301-313; T. Grdzeldze, Georgia, Patriarchal Orthodox Church, The Encyclopedia of Eastern Orthodox Christian, vol. I, ed. J. McGuckin, 2011, pp. 264-275; K. Salia, History of Georgian nation, transl. K. Vivian, Paris, 1983; M. Lordkipanidze, Georgia in the XI-XII centuries, Tbilisi, 1987; V. Silogava, K. Shengelia, History of Georgia: From the Ancient Times Through the "Rose Revolution", Tbilisi, 2007.

³⁹ Ш. Месхиа, Города и городской строй феодальной Грузии, Тбилиси, 1959.

⁴⁰ Д. Гвритишвили, Из истории социальных отношений в позднефеодальной Грузии (сатавадо сеньории), Тбилиси, 1961.

⁴¹ А. Панцхава, Очерки аграрной истории феодальной Картли-Кахети конца XVIII века, Тбилиси, 1965.

⁴² Н. Бердзенишвили, Очерк из истории развития феодальных отношений в Грузии (XIII-XVI в.), Тбилиси, 1938.

Ատենախոսության կատարման ընթացքում օգտագործվել են նաև թեմային վերաբերող վրաց հետազոտողների ատենախոսություններ, որոնցից մասնավորապես հարկ է առանձնացնել Բ. Լուինաձեի «Վրաց եկեղեցական սենյորության պատմությունից (Շիո-Մղիվմեի վանք)»⁴³, Գ. Զիժիգուրիի «Ֆեոդալական ունեւոր XVIII դ. Արևելյան Վրաստանում»⁴⁴, Ն. Զիխլաձեի «Ուղղափառության տնտեսական զուգահեռներ»⁴⁵, Ա. Աբգիանիձեի «Պետության և եկեղեցու փոխհարաբերությունները Վրաստանում»⁴⁶ հետազոտությունները:

Ատենախոսության շրջանակներում օգտագործվել են նաև ուսուցիչ հետազոտողների՝ Ա. Նովիսելցի, Ա. Նատրոսի, Ն. Պոկրովսկի, Օ. Մարկովայի և այլոց աշխատությունները⁴⁷:

Թեմայի ուսումնասիրության համար արևմտյան հետազոտողների՝ Դ. Լանգ⁴⁸, Ռ. Ստեֆենի⁴⁹, Ս. Ռապպի⁵⁰ և այլոց ուսումնասիրությունների շարքում⁵¹

⁴³ Զ. Լոմինաձե, քართული սաքլեցիսո սենյորիս օստորիդան (Միո-Մլցիմիս մոնաստերի), օստորիս կանդիդատի սամբցնեյերո զիսերտացիա, Թբիլիսի, 1949.

⁴⁴ Զ. Ժիժիգուրի, ֆեոդալური ընդդէմ XVIII սաքլեցիսոնցիս ավոսազլետ սաքարտեյելոմի, օստորիլլ մեցնիերեթատա կանդիդատիս զիսերտացիա, Թբիլիսի, 1979.

⁴⁵ Ն. Բիսլաձե, մարտլամաձիձեթլոմիս Եկոնոմիկური թարալեյելի, Թեոլոգիս զոքտորիս Բարոսիսի մոսաթոյեթլաձ զիսերտացիա, Մլցգորոձի, 2011.

⁴⁶ Ն. Զիխլաձե, սաքարտեյելոս սաեթլմիլլոսա զա Եկլեցիսիս զրտիերտոթելի, զիսերտացիա թոլլիտիկլլ մեցնիերեթատա ազաձեմիլլի Բարոսիսի մոսաթոյեթլաձ, Թբիլիսի, 2006.

⁴⁷ Ա. Ս. Նովոսելցեյ, Վ. Տ. Սաշուտո, Ս. Վ. Շերեպնիկ, Սուի ըազիտիա ֆեոձալիզմա (Ձաքազաթե, Մրեյնյա Ազիա, Րուս, Սրիբալտիկա), Մոսկա, 1972; Ա. Ս. Նովոսելցեյ, Գենեզիս ֆեոձալիզմա ըա Մրեյնյա Ձաքազաթե (օթիլ սրաձնիտելնո-իստորիկոսկո Իսսլեձաձաձա), Մոսկա, 1980; Ա. Նաթրոյե, Մլքետ և Եգո սոթոր Սուեի-Շոյեղի (իստորիկո-արխեոլոգիկոսկո օթիսաձա), Տիֆլիս, 1901; Ն. Սոկրոսկի, Կրաթկիլ օթերկո-իստորիկոսկո զիսնի Գրուզիա սո Վրեմեի թոյաղաձա ըա ըա Խրիստիանստա և զո Վստլլեղաձա Եյա ըա Սոձաձնստո Րուսիա, Տիֆլիս, 1905; Օ. Մարկոյա, Րուսիա, Ձաքազաթե և մեթլաձաձաձա ըա Մրեյնյա Վեկե, Մոսկա, Նալկա, 1966; Ն. Բուտկոյ, Մաթերիալի զա Նոձաի Իստորիա Կաձազա ս 1722 թո 1803 թո, զ. 2, Սաձն Սեթերբուրգ, 1869; Մ. Սոլիեձեյկո, Մաթերիալի զո Իստորիա Գրուզիո-րուսկիս Վազիմոոթնոսիլլի 1615-1640 թթ., (թոսոլեթա Վերեկնա, Խարիտոնա, Փեոձոսիա, Նիկիֆորա, Գեգեձա և Վոլկոնսկոսկո), Տբիլիսի, 1937; Փ. Գուտնոյ, Գորսկիլ ֆեոձալիզմ, զ. II, Վլաձիկաձա, 2008.

⁴⁸ D. M. Lang, Georgia in the Reign of Giorgi the Brilliant (1314-1346), Bulletin of the School of Oriental and African Studies, vol. 17, № 1, 1955, pp. 74-91.

⁴⁹ R. Stephen, Georgian Christianity, The Blackwell Companion to Eastern Christianity, ed. K. Parry, Chichester, 2007, pp. 137-155.

⁵⁰ S. Rapp, Studies in Medieval Georgian Historiography: Early Texts and Eurasian Contexts, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 601, Lovani, 2003.

⁵¹ M. D' Ohsson, Des peuples du Caucase, Paris, 1828; C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Washington, 1963; S. Rapp, Studies in Medieval Georgian Historiography: Early Texts and Eurasian Contexts, Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 601, Lovani, 2003; M. Wardrop, Life of Saint Nino, New Jersey, 2006; R. Floor, E. Herzog, Iran And The World In The Safavid Age, London, 2012.

մեծ արժեք ունեն հատկապես Մ. Բրոսսեի աշխատանքները⁵², քանի որ դրանց մեջ Վրաստանի պատմությունը և աշխարհագրությունը ներկայացնելուն զուգահեռ հեղինակը ընդգրկել է բազմաթիվ արժեքավոր վավերագրեր՝ թարգմանելով և ծանոթագրելով դրանք:

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում օգտագործվել են հայ գիտնականների՝ Ն. Ակինյանի⁵³, Պ. Մուրադյանի⁵⁴, Պ. Չոբանյանի⁵⁵, Հ. Մարգարյանի⁵⁶ Վրաստանի և Վրաց եկեղեցու պատմությանը վերաբերող մեծարժեք հետազոտությունները: Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև Հ. Փափազյանի⁵⁷, Ա. Մարկոսյանի⁵⁸, Վ. Ռշտունու⁵⁹, Թ. Ավդալբեգյանի⁶⁰, Ա. Ղարազյոզյանի⁶¹, Հ. Թորոսյանի⁶² հայկական ավատատիրական կարգերի և վանական հողատիրության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրությունները:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները ընգրկում են XVI դ. սկզբից մինչև XVIII դ. վերջն ընկած ժամանակաշրջանը: XVI դ. սկզբին

⁵² M. Brosset, Diplômes géorgiens, L'Institut, journal general des societies et travaux scientifiques, II section, N° 25, Paris, 1838, 73-75 pp., Description géographique de la Géorgie, par le Tsarevitch Wakhoucht, par M. Brosset, S.-Petersbourg, 1842; M. Brosset, Copie figure de quelques cachets géorgiens, Bulletin scientifique, t. VII, Saint-Petersbourg, 1840, pp. 165-170; Brosset M., Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle, 1^{re} partie, St.-Petersbourg, 1849; M. Brosset, Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle, II partie, II livr., St.-Petersbourg, 1857; Brosset M., Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle, Introduction et tables des matières. St.-Petersbourg, 1858.

⁵³ Ն. Ակինյան, Կիրիոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910:

⁵⁴ Ս. Мурадян, Армянская эпиграфика Грузии (Картли и Кахети), Ереван, 1985; Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977; Պ. Մուրադյան, Վրաց եկեղեցին (Պատմամշակութային համառոտ ակնարկ), «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 2000, էջ 289-305; Պ. Մուրադյան, Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, ս. Էջմիածին, 2009:

⁵⁵ Ս. Чобанян, «Дневник» Тер-Иоанна Ходжи-Агаана, Кавказ и Византия, вып. 2, Ереван, 1980, стр. 87-90; Պ. Չոբանյան, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981:

⁵⁶ А. Маргарян, К датировке и интерпретации «Типика» Ваханского пещерного монастыря, Кавказ и Византия, вып. 2, 1980, Ереван, стр. 81-86; А. Маргарян, Феодальный иммунитет и процесс закрепощения крестьянства в Армении и Грузии в XI-XIII веках, Кавказ и Византия, вып. 4, Ереван, 1984, стр. 5-20.

⁵⁷ А. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Ереван, 1972.

⁵⁸ Ա. Մարկոսյան, Ազրարային հարաբերությունները Արարատյան երկրում, Երևան, 1959:

⁵⁹ Վ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմությունից, մաս Ա, Երևան, 1960:

⁶⁰ Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969:

⁶¹ Ա. Ղարազյոզյան, Տաթևի վանքի շրջակա կավածքները, Պատմա-բանասիրական հանդես, 1981, N° 1, էջ 132-135:

⁶² Հ. Թորոսյան, Եկեղեցական հողատիրությունը և վանական կավածատիրական տնտեսությունն Արևելյան Հայաստանում (XVI-XVII դդ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N° 4, 1981, էջ 80-89:

Վրաստանի քաղաքական տրոհումն արդեն ավարտվել էր, և ձևավորվել էին Իմերեթի, Քարթլիի և Կախեթի թագավորությունները երկրի արևելյան և արևմտյան հատվածներում: Քաղաքական այս տրոհումը զուգակցվել էր հոգևոր իշխանության պառակտմամբ և արդյունքում Մցխեթի կաթողիկոսության հովվության շրջանակներից դուրս էր մնացել Արևմտյան Վրաստանը, ուր ձևավորվել էր Պիցունդայի կամ Բիճվինտայի կաթողիկոսությունը: Բացի այդ սա աշխարհաքաղաքական փոփոխությունների այն շրջանն էր, երբ Անդրկովկասը հայտնվեց Սեֆյան Իրանի ու Օսմանյան Թուրքիայի շահերի բախման կիզակետում: Ելնելով նշյալ հանգամանքներից ուսումնասիրության մեկնարկային շրջան է ընտրվել XVI դ. սկիզբը: Հետազոտության սահմանները ներառում են մինչև XVIII դ. վերջն ընկած հատվածը՝ XIX սկզբին Ռուսական կայսրության սահմաններում Արևելյան Վրաստանի ընդգրկմամբ և Մցխեթի կաթողիկոսության լուծարմամբ պայմանավորված:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում: Հիմնական դրույթները գեկուցումների տեսքով ներկայացվել են «Երիտասարդ արևելագետների» (XXXII, XXXIII), «Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը» հանրապետական գիտաժողովների ժամանակ: Թեմայի ուսումնասիրությանը նպաստել են Վրաստան կատարված գործուղման արդյունքները՝ Վրաստանի պառլամենտի ազգային գրադարանում և Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնում իրականացված հետազոտական աշխատանքները: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելք բաժնի կողմից:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսությունը կիրառական նշանակություն կարող է ունենալ նոր պատմագիտական հետազոտությունների համար: Ուսումնասիրության հիմնական դրույթները կարող են օգտակար լինել Վրաստանի և Վրաց եկեղեցու պատմության վերաբերյալ ուսումնասիրությունների համար: Ատենախոսության հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտագործվել բուհական կրթական ծրագրերում և դասախոսություններում:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության կատարման համար կիրառվել են պատմահամադրական և պատմավերլուծական քննության մեթոդները: Թեմայի ուսումնասիրության համար մեթոդաբանական իմաստով կարևոր նշանակություն է տրվել սկզբնաղբյուրների հետազոտությանը՝ ասպարեզում առկա գիտական գրականության օգտագործման համադրությամբ:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և երկու հավելվածներից:

Ներածության մեջ ներկայացվել է թեմայի արդիականությունը, հետազոտվող խնդիրներն ու նպատակները, ատենախոսության գիտական նորույթը, տրվել է ատենախոսության կատարման ընթացքում օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսություն:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերություններն Արևելյան Վրաստանում վանական հողատիրության ձևավորման համատեքստում**», բաղկացած է երկու ենթագլուխներից: **Առաջին ենթագլխում «Վանական հողատիրության զարգացման գործընթացը Վրաստանում»** պատմական ակնարկ է կատարվել IV-XV դդ. ընկած ժամանակահատվածում Վրաստանում վանական հողատիրության ձևավորմանը և զարգացմանը՝ զուգահեռ ներկայացնելով Վրաց եկեղեցու և Վրաստանի պատմության կարևոր անցքերն ու դրանց ունեցած ազդեցությունը վանական հողատիրության և ապահարկության իրավունքի ձևավորման վրա: Վրաստանի և Վրաց եկեղեցու պատմության կարևորագույն այդ դեպքերից անդրադարձ է կատարվել IV դ. II քառորդի սկզբում Վրաստանում քրիստոնեության ընդունմանը, V դ. Վրաստանի Վախթանգ I (446-499 թթ.) թագավորի ջանքերով Վրաց եկեղեցու ինքնիշխանության ընդլայնմանն ու կաթողիկոսության հաստատմանը, V-VI դդ. Վրաց եկեղեցու ազդեցության տարածմանը, նոր հոգևոր կենտրոնների ստեղծման և վանական հողատիրության ձևավորման գործընթացի սկզբնավորմանը, Հայոց և Վրաց եկեղեցիների բաժանմանը: VII-VIII դդ. Վրաստանում Արաբական խալիֆայության գերիշխանության հաստատմանը, IX-X դդ. Վրաց եկեղեցու որպես արդեն խոշոր ավատատերի դիրքերի ամրապնդմանը: Առավել հանգամանակից են ներկայացվել XI-XV դդ. պատմական անցքերը՝ Բագրատ IV թագավորի (1027-1072 թթ.) ջանքերով միասնական թագավորության ստեղծումը և ուժեղ աշխարհիկ իշխանության հաստատումը, որը նպաստում էր վանական հողատիրության զարգացմանը, Դավիթ IV Շինարարի (1089-1125 թթ), Թամար թագուհու (1184-1213 թթ.) կողմից եկեղեցուն կալվածքների և ճորտերի նվիրատվությունները, վանքապատկան կալվածքների և ապահարկության իրավունքի շնորհումը, Ռուփս-Ուրբնիսիի և Գելաթի եկեղեցական ժողովների արդյունքում անցկացրած բարեփոխումները, XI-XII դդ. եկեղեցու դերի բարձրացումը և տնտեսական հզորության աճը, XIII դ. կեսերին մոնղոլական գերիշխանության հաստատումը, Դավիթ Ուլու (1247-1270 թթ.) և Դավիթ Նարին (1245-1293 թթ.) թագավորների օրոք լայն տարածում են ստացած վանքապատկան հողերի նկատմամբ ունեցվածությունները, XIV դ.

առաջին կեսին Գեորգի V-ի (1314/18-1346 թթ.) ջանքերով եկեղեցու ազդեցության և տնտեսական հզորության վերականգնումը, XIV դ. վերջում Արևելյան Վրաստանում Մցխեթի կաթողիկոսությանը կալվածքների ապահարկության առաջին հրովարտակի շնորհմանը փաստի վկայությունը, XV դ. ընթացքում Լենկ Թեմուրի, Կարա-Կոյունլու և Ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի արշավանքների արդյունքում տնտեսական և քաղաքական առումով թուլացած Վրաստանում վանական հողատիրությունը անկումը, Ալեքսանդր I-ի (1412-1442 թթ.) բարենորոգումները, Մցխեթի կաթողիկոսությունից Արևմտյան Վրաստանում Պիցունդայի կամ Բիճվինտայի կաթողիկոսության անկախացումը և դարավերջին Վրաստանի տրոհումը Իմերեթի, Քարթլիի և Կախեթի թագավորությունների:

Երկրորդ ենթագլխում՝ «Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները Արևելյան Վրաստանում XVI-XVIII դարերում», ներկայացված են XVI-XVIII դդ. հոգևոր և աշխարհիկ իշխանությունների՝ մի կողմից Վրաց եկեղեցու և Քարթլիի ու Կախեթի գահակալների, մյուս կողմից Մցխեթի կաթողիկոսության և Իրանի շահերի փոխհարաբերությունները, հոգևոր իշխանության իրավասությունները, մասնակցությունը և դերը երկրի տնտեսական ու քաղաքական կյանքին: Եկեղեցին Արևելյան Վրաստանում բավական ամուր դիրքեր ուներ և օժտված էր բավական լայն լիազորություններով և իրավասություններով: Վրաց եկեղեցին ուներ իր դատարանները և կանոնադրությունը: Եկեղեցին որպես ավատատեր ինքնիշխան էր սեփական կալվածքների և ճորտերի տնօրինման հարցում: Հոգևոր իշխանությունն իր աշխույժ մասնակցությունն ուներ երկրի արտաքին քաղաքականության մեջ՝ ներգրավվելով դեսպանությունների և պատվիրակությունների կազմակերպման գործում: Վրաց եկեղեցու առաջնորդներն ունեին ռազմական իրավասություններ և կարող էին առաջնորդել վանքապատկան ճորտերից կազմված ջոկատները:

Հոգևոր և աշխարհիկ իշխանությունները հիմնականում հանդես էին գալիս որպես դաշնակիցներ: Քարթլիի և Կախեթի գահակալները օժանդակում էին եկեղեցուն՝ կալվածքներ, ճորտեր և այլ ունեցվածք նվիրաբերելով, ապահարկության իրավունքով և այլ արտոնություններ շնորհելով: Վրաց եկեղեցին իր հերթին աջակցում էր աշխարհիկ իշխանությանը՝ նպաստելով կենտրոնաձիգ իշխանության դիրքերի ամրապնդմանը, խոչընդոտելով Արևելյան Վրաստանի հոգևոր իշխանության ամբողջականությանը սպառնացող պառակտիչ ուժերին՝ XVI դ. երկրորդ կեսին կանխելով Մցխեթի կաթողիկոսությունից անկախանալու փորձերը Սամցխեում և Կախեթում: Սակայն երբեմն աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև տարաձայնություններ էին ի հայտ գալիս, որոնց արդյունքում տեղի էին ունենում լուրջ փոփոխություններ՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների շահերի

բախման արդյունքում ծախողվում են Քարթլին և Կախեթը միավորելու Դավիթ X-ի (1505-1525 թթ.) ծրագրերը, Քարթլիի իսլամադավան գահակալ Սիմոն II-ի (1619-1629 թթ.) օրոք ուժգնանում են եկեղեցու նկատմամբ հալածանքները, Ռոստոմ թագավորի (1632-1658թթ.) դեմ դավադրությանը մասնակցելու պատճառով մահապատժի է ենթարկվում Էվդեմոզ Դիասամիձե կաթողիկոսը:

XVI դ. երկրորդ կեսին Արևելյան Վրաստանի՝ Իրանի գերիշխանության տակ ընկնելուց հետո կարևորություն են ստանում Իրանի շահերի և Մցխեթի կաթողիկոսության փոխհարաբերությունները: Իրանի շահերը, հաշվի առնելով Արևելյան Վրաստանում եկեղեցու ունեցած դերը և ազդեցությունը, մի կողմից աջակցում են Վրաց եկեղեցուն՝ վակֆեր տրամադրելով, կաթողիկոսին ռոճիկ նշանակելով և վանքապատկան կալվածքների ամբողջականությունը երաշխավորելով, մյուս կողմից սկսում են միջամտել եկեղեցու կյանքին, որի արդյունքում XVII դ. սկզբից արդեն կաթողիկոսներին հաստատում էին շահերը:

Երկրորդ գլուխը՝ «Վանական հողատիրությունն Արևելյան Վրաստանում XVI-XVIII դարերում», բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «Վանքապատկան կալվածքները, դրանց տեսակները և ձեռքբերման ճանապարհները», XVI-XVIII դդ. վանական հողատիրության, Վրաց եկեղեցու ունեցվածքի տեսակների, կալվածքների չափի, և տեղաբաշխության ուսումնասիրության համար քննական վերլուծությամբ ներկայացված են մի շարք կարևորագույն վավերագրեր՝ Մցխեթի կաթողիկոսությանը 1559 թ. տրված կալվածքների ապահարկության հրովարտակը, XVI դ. կաթողիկոսական կալվածքների ցուցակը, Իրանի շահերի մի շարք ֆիրմանները, Վրաց եկեղեցու տարբեր թեմերին ու հոգևոր կենտրոններին տրված նվիրատվության հրովարտակները, 1801-1802 թթ. Վրաստանի նահանգապետ Կնորրինգին կաթողիկոս Անտոն II-ի (1788-1811 թթ.) զեկուցագիրը: Վերոհիշյալ վավերագրերի քննությունը ցույց է տալիս, որ XVI-XVIII դդ. Վրաց եկեղեցին տնօրինում էր ահռելի հարստության. նրան էին պատկանում տասնյակ գյուղեր, մի քանի ամրոցներ, մաքսակետեր, հողային կալվածքներ, խաղողի այգիներ, արոտավայրեր, քաղաքներում արհեստանոցներ, կրպակներ, թեթև արդյունաբերական հաստատություններ և այլ հարստություններ: Հարկ է նշել, սակայն, որ հրովարտակների քննությունը թույլ չի տալիս վանքապատկան կալվածքների ճշգրիտ չափը որոշել, քանի որ վավերագրերի մի մասը արտագրված է նախկինում տրված հրովարտակներից և դրանցում շարունակվում են հիշատակվել այնպիսի կալվածքներ, որոնք քննվող շրջանում կամ վանքապատկան ունեցվածք չեն հանդիսացել, կամ ամայացել ու դադարել են գոյություն ունենալուց:

Վանքապատկան կալվածքները հիմնականում ձևավորվում էին նվիրատվություններից: Բացի այդ եկեղեցու առաջնորդները ևս հոգ էին տանում կալվածքների ընդարձակման համար՝ նորանոր կալվածքներ գնելով,

սեփականելով ժառանգներ չթողած հանգուցյալների կալվածքները: Արևելյան Վրաստանում իր կալվածքները և ճորտերն ուներ նաև Հայոց եկեղեցին՝ Էջմիածնի կաթողիկոսությունը, Գեղարդի, Հաղպատի և Սանահնի վանքերը, Սևանի անապատը: Բացի Հայոց եկեղեցուց Արևելյան Վրաստանում իրենց կալվածքներն ու ճորտերն ունեին նաև Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի ուղղափառ եկեղեցիները:

Երկրորդ ենթագլխում՝ «Վանքապատկան ճորտերը որպես եկեղեցու ունեցվածքի տեսակ և եկեղեցու հպատակ ազնվականների դասը», ներկայացվել է Արևելյան Վրաստանի ճորտատիրական կարգերի առանձնահատկությունները, ճորտերի տեսակները, վանքապատկան ճորտերի նկատմամբ եկեղեցու իրավունքները և եկեղեցու հպատակ ազնվականների՝ ազնաւորների դասը: Արևելյան Վրաստանի ավատատիրական կարգերի յուրահատկություններից էր ճորտական դասի բազմաշերտությունը: Հայտնի էին *մսախորի, կմա, մոնա, գլեխի, բոգանո, խիզանի, ներիերի, նածկալորբվի, մկվիդրի* ճորտերի տեսակները: 1736-1744 թթ. թվագրվող «կաթողիկոսական ճորտերի նկարագրության ցուցակի» ուսումնասիրությունից երևում է, որ Վրաց եկեղեցին ճորտեր ուներ ճորտական դասի վերոնշյալ բոլոր շերտերում: XVI-XVIII դդ. Արևելյան Վրաստանում տեղական գահակալների և ավատատերերի թվում խոշոր ճորտատեր էր նաև Վրաց եկեղեցին: Վանքապատկան ճորտերի զգալի մասը տեղաբաշխված էր գյուղական համայնքներում: Բացի այդ եկեղեցին իր ճորտերն ուներ նաև քաղաքային բնակչության շրջանում: Վրաց եկեղեցին ճորտեր ձեռք էր բերում ինչպես նվիրատվությունների, այնպես էլ գնումների ձևով: Ընդ որում, եկեղեցին ճորտեր գնելու իրավունք ուներ, սակայն վանքապատկան ճորտերի վաճառքը արգելվում էր: Վրաստանի ավատատիրական կրգերի մեկ այլ յուրահատկություն էր այն, որ ազնվականները կամ ազնաւորները ևս կարող էին հանդիսանալ անձնական կախվածության մեջ գտնվող անձինք: Իրենց ազնաւորներն ունեին ինչպես թագավորները և իշխանները, այնպես էլ Վրաց եկեղեցին: XVIII դ. վերջին Վրաց եկեղեցու ազնաւորների թիվը հասնում էր 13-ի: Վրաց եկեղեցու ազնաւորները վերակացուների, կառավարիչների և հարկահավաքների պաշտոններում իրականացնում էին վանքապատկան կալվածքների տնօրինումը:

Երրորդ գլխի «Ապահարկության իրավունքը Արևելյան Վրաստանում» առաջին ենթագլխում՝ «Արևելյան Վրաստանի հարկային համակարգը ու ժիջնադարում» անդրադարձ է կատարվել Արևելյան Վրաստանի հարկային համակարգին և քննական վերլուծությամբ ներկայացվել են պետական և եկեղեցական հայտնի և նորահայտ տեսակները: Այս հետազոտությունը պայմանավորված է ապահարկության իրավունքի ուսումնասիրությունը լիարժեք դարձնելու համար, քանի որ հարկատեսակների կիրառության և ձևերի չիմացության դեպքում անհնար է պատկերացում կազմել

հարկերից ազատվելու՝ ապահարկության երևույթի մասին: Պետական հարկերի ուսումնասիրությունը պայմանավորված է նրանով, որ Վրաց եկեղեցին եկեղեցական հարկերից բացի իր ճորտերից գանձում էր նաև պետական հարկերը: Հետազոտության ընթացքում քննության են առնվել *բեգարա, կ'ալանի, դալա, կուլուխի, ուլուխա, ուլակ'ի, կողիս-պուրի, սականոնո, սախուցո, դրամա, սամասփինձլո, լաշքարի, մալի, սաուրի, սուրսաթի, նախիրիս-թավի, սաբալախո, սաբանջրե, մախրի, մալուջհաթ, ախոռսալարի, բազիերի* և մի շարք այլ հարկեր և հարկային պարտավորություններ:

Երկրորդ ենթագլխում՝ «Ապահարկության իրավունքը, թարխանության ձևերը և վանական կալվածքների ապահարկումը Արևելյան Վրաստանում», ներկայացված է ապահարկության իրավունքի պատմական զարգացումը և դրա դրսևորումները վրացական միջնադարյան ավատատիրական կարգերի համատեքստում: Ապահարկության իրավունքը, որը վրացական միջավայրում հայտնի էր թարխանություն անվանմամբ, ուներ կիրառության տարբեր ձևեր և կիրառություն: Թարխանությունը՝ ապահարկությունը, կարող էր լինել ամբողջական կամ մասնակի՝ ենթադրելով հարկային իմունիտետ բոլոր կամ մի քանի հարկերից և կարող էր լինել ժամանակավոր կամ մշտական: Ճիշտ է, ապահարկության իրավունքը տրվում էր աշխարհիկ անձանց ևս, սակայն այս արտոնությունը աշխարհիկ իշխանության կողմից հիմնականում շնորհվում էր Վրաց եկեղեցուն և նրա կալվածքներին ու ճորտերին: Վանքապատկան կալվածքների և ճորտերի ապահարկության իրավունքը ամրագրվում էր ապահարկության հրովարտակներով, որոնք Վրաց եկեղեցու առաջնորդները ներկայացնում էին տեղական գահակալներին վերահաստատելու կամ նորոգելու համար: Ապահարկության իրավունքը լրջորեն նպաստում էր Վրաց եկեղեցու տնտեսական հզորության աճին. վանքապատկան կալվածքները և ճորտերը դադարում էին պետությանը հարկատու լինելուց և փոխարենը նույն հարկերը գանձվում էին եկեղեցու կողմից: Ապահարկություն իրենց ճորտերին կարող էին շնորհել նաև հոգևոր իշխանության ներկայացուցիչները: Հարկ է նշել, որ Արևելյան Վրաստանում ապահարկության իրավունք շնորհվում էր նաև Հայոց եկեղեցու կալվածքներին և ճորտերին: Ապահարկության իրավունքը կամ թարխանությունը կարող էր կիրառվել նաև դատական իմունիտետի, անձեռնմխելիության և այլ նշանակության ներքին: Հարկ է նշել, որ Արևելյան Վրաստանում վանական հողատիրության և ապահարկության իրավունքի ուսումնասիրությունն իրականացվել է հայկական, բյուզանդական և ռուսական ավատատիրական կարգերում հայտնի նույն երևույթների համեմատական հետազոտությամբ, վերհանվել են դրանց միջև առկա տարբերություններն ու առանձնահատկությունները:

ԵՐԱՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. XVI-XVIII դդ. վանական հողատիրությունը հանդիսանում էր Արևելյան Վրաստանի ավատատիրական համակարգի անքակտելի բաղադրիչը: Այս երևույթի պատմական զարգացման արդյունքում Վրաց եկեղեցին դարձել էր Վրաստանի խոշոր ավատատերերից մեկը:

2. Վանական հողատիրության զարգացումը ուղղակի կախում ուներ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև ձևավորված փոխհարաբերություններից: Վրաց եկեղեցին հիմնականում օգտվում էր տեղական գահակալների աջակցությունից, ինչն արտահայտվում էր եկեղեցուն կալվածքներ, ճորտեր և այլ ունեցվածք նվիրաբերելով, լիազորություններով և արտոնություններով օժտելով, ապահարկության իրավունքի շնորհմամբ: Վրաց եկեղեցին, իր հերթին, հանդիսանում էր դաշնակից և հենարան աշխարհիկ իշխանության համար, օժանդակում նրան արտաքին և ներքին վտանգների դեմ պայքարում, հոգ տանում իր հովվության ամբողջականության համար, ինչը կարևոր հանգամանք էր քաղաքականապես պառակտված Վրաստանի դեպքում: Սակայն, երբեմն, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև ծագում էին լուրջ տարաձայնություններ, որոնք հիմնականում ի հայտ էին գալիս այն ժամանակ, երբ աշխարհիկ իշխանությունը փորձում էր միջամտել եկեղեցու գործերին, սեփականել նրա կալվածքները, ինչպես նաև այն դեպքերում, երբ եկեղեցու միջամտությունը քաղաքական անցուղարձին հակասում էր իշխող ուժի ծրագրերին: Երկու ուժերի շահերի բախումը հաճախ հանգեցնում էր եկեղեցու նկատմամբ հալածանքների, նրա կալվածքների նկատմամբ ոտնձգությունների, քաղաքական տեղաշարժերի՝ պաշտոնանկություններ, դավադրություններ և այլն:

3. Իրանի գերիշխանության տակ ընկնելուց հետո նոր հարաբերություններ են ձևավորվում Իրանի շահերի և Վրաց եկեղեցու միջև: Իրանի գահակալները, եկեղեցուն դիտարկելով որպես Արևելյան Վրաստանում ազդեցիկ ուժ, փորձում էին այն պահել իր ազդեցության տակ՝ մի կողմից հանդես գալով որպես եկեղեցու հովանավոր և պաշտպան, մյուս կողմից միջամտում էր եկեղեցու կյանքին՝ անգամ մասնակցելով կաթողիկոսի ընտրության հարցին: Չնայած շահական արքունիքին հարկատու լինելուն և նրա ազդեցության տակ ընկնելուն՝ եկեղեցին իր հերթին փորձում էր ստանալ շահերից իր և իր հոտի, վանքապատկան ունեցվածքի ապահովության երաշխիքներ:

4. XVI-XVIII դդ. ընկած շրջանը հանդիսացավ Արևելյան Վրաստանում վանական հողատիրության զարգացման գագաթնակետը, քանի որ այս շրջանում Վրաց եկեղեցին տնօրինում էր մեծ քանակությամբ գյուղերի, մի քանի ամրոցների, այգիների, վարելահողերի, անասնահոտերի, ջրաղացների, քաղաքներում տների, արհեստագործական ձեռնարկությունների,

արհեստանոցների, կրպակների և այլ հարստության: Եկեղեցու կալվածքները և ունեցվածքը ձևավորվում էր հիմնականում վրաց գահակալների նվիրաբերություններից: Բացի նվիրատվություններից հոգևոր իշխանությունը նաև ինքն էր հոգ տանում եկեղեցու կալվածքներն ընդարձակելու համար՝ նոր ունեցվածքներ և ճորտեր գնելով: Եկեղեցու վերոհիշյալ կալվածքները հիմնականում գտնվում էին խոշոր քաղաքների մերձակայքում, ինչը խոսում է առավել կարևոր նշանակություն ունեցող կալվածքների տիրելու մասին: Վանքապատկան ունեցվածքի մյուս կարևոր բաղադրիչը հարյուրավոր ճորտերի խավն էր, որոնց շահագործումից և ստացված հարկերից գոյանում էր եկեղեցու հարստությունը: Վրաստանում, ի տարբերություն Իրանի և Հայաստանի, ճորտերը կցված էին այն հողերին, ուր բնակվում էին և, ըստ այդմ, վանքապատկան ամբողջ գյուղեր իրենց բնակչությամբ հանդերձ հանդիսանում էին եկեղեցու սեփականությունը, իսկ քաղաքներում եկեղեցու ճորտերը հիմնականում արհեստավորներ և վաճառականներ էին: Բացի այդ, ինչպես վրաց գահակալները և խոշոր ավատատերերը, այնպես էլ Վրաց եկեղեցին ուներ նաև իր հպատակ ազնվականները կամ ազնաույները:

5. Արևելյան Վրաստանում խոշոր ավատատեր էր նաև Հայոց եկեղեցին, որը վրացական ավատատիրական կարգերի առանձնահատկություններով պայմանավորված նաև որպես ճորտատեր էր հանդես գալիս:

6. Վանական հողատիրության զարգացման գրավականն էր հանդիսանում ապահարկության իրավունքը: Ուսումնասիրվող շրջանում ապահարկության իրավունքը, որն այս շրջանում հայտնի էր թարխանություն անվանմամբ, կարող էր տրվել և՛ կալվածքների, և՛ մարդկանց: Բացի այդ թարխանությունը հարկային պարտավորություններից ազատելուց զատ կարող էր ենթադրել նաև այլ արտոնությունների ընձեռում *թարխան* անձանց համար: Ապահարկումը կարող էր լինել լրիվ կամ մասնակի, անժամկետ և ժամանակավոր: Եկեղեցուն ապահարկություն շնորհում էին վրաց գահակալները և խոշոր ավատատերերը: Հոգևոր իշխանության վերնախավը իր կալվածքների և ճորտերի համար ձեռք բերած ապահարկության իրավունքը հարատև դարձնելու համար մշտապես ներկայացնում էր Արևելյան Վրաստանի թագավորներին՝ վերահաստատելու կամ նորոգելու համար: Ապահարկման դեպքում վանքապատկան կալվածքները կամ ճորտերը դադարում էին պետական հարկերը մուծելուց, ինչը և՛ խթանում էր վանական հողատիրության զարգացումը, և՛ եկեղեցու կալվածքներին ու ճորտերին տալիս արտոնյալ կարգավիճակ: Ապահարկության իրավունքը տարածվում էր նաև Արևելյան Վրաստանում Հայոց եկեղեցու կալվածքների և ճորտերի վրա, որը շնորհվում էր վերջիններիս վրաց գահակալների կողմից:

7. Ապահարկումից հետո վանքապատկան կալվածքներից և ճորտերից հարկերը գանձվում էին եկեղեցու կողմից: Արևելյան Վրաստանի հարկային

համակարգն աչքի էր ընկնում իր բազմազանությամբ և զարգացվածությամբ: Ուսումնասիրվող շրջանում վրացական հարկային համակարգը ներառում էր ինչպես բուն վրացական հարկատեսակներ՝ *մախսոփի*, *կողիս-պուրի*, *կուլուխի* և այլն, այնպես էլ նախորդած դարաշրջաններից հայտնի արաբական, մոնղոլական, պարսկական հարկեր՝ *սաուրի*, *ուլակի*, *լաշքարի*, *դալա* և այլն: Ապահարկման իրավունքից օգտվելով՝ Վրաց եկեղեցին իր կալվածքներից և ճորտերից գանձում էր ինչպես նաև եկեղեցական, այնպես էլ պետական հարկերը:

8. Վրաց եկեղեցին ուներ բավական մեծ ինքնուրույնություն և լիազորություններ: Հոգևոր իշխանության ներկայացուցիչներն իրենք էին վերակացուներ, կառավարիչներ և հարկահավաքներ նշանակում վանքապատկան կալվածքները տնօրինելու համար: Եկեղեցին ուներ իր դատարանները, որոնց դատին ենթակա էին հոգևորականները, վանքապատկան ճորտերը և ազնաւորները, կենցաղային և հոգևոր կյանքին վերաբերող դատական հայցերը, եկեղեցու նկատմամբ հանցագործությունների դատավարությունը: Հոգևոր իշխանությանն ընձեռնված էին նաև ռազմական բնույթի լիազորություններ: Կաթողիկոսին և Եպիսկոպոսներին տրված էր վանքապատկան ճորտերից հավաքագրված զորաջոկատները անձամբ կամ իրենց կողմից նշանակված հրամանատարների միջոցով գլխավորելու իրավասությունը: Վրաց եկեղեցին կարևոր դեր էր խաղում նաև երկրի քաղաքական կյանքում: Կարևոր դերակատարում ունեին հոգևոր իշխանության ներկայացուցիչները հատկապես արտաքին քաղաքականության իրականացման գործում: Հոգևորականները ընդգրկվում էին պատվիրակությունների կազմում, իրականացնում դեսպանական առաքելություններ՝ հաճախ գլխավորելով նմանօրինակ ձեռնարկումները: Եկեղեցու իշխանությունն այնքան մեծ էր, որ նա կարող էր միջամտել անգամ արքայական ընտանիքի ամուսնական գործերին:

Ատենախոսության **երկու հավելվածներում** ընդգրկված են Արևելյան Վրաստանում XVI-XVIII դդ. Վրաց եկեղեցու հովվության տարածքներն արտացոլող երկու քարտեզներ և հողատիրության ու ապահարկության վերաբերյալ չորս վավերագրեր:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Վանական հողատիրությունը Վրաստանում (համառոտ ակնարկ), Մերձավոր Արևելք (հողվածների ժողովածու), № VIII, Երևան, 2012, էջ 115-123:
2. ქართული წყაროთმცოდნეობა (Georgian Source-Studies), № XV-XVI, Налоговая система в Восточной Грузии в позднее средневековье, თბილისი (Tbilisi), 2013/2014, გვ. 138-146.
3. Արևելյան Վրաստանում վանական հողատիրության հարցի շուրջ (XVI դ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, № XXIX, Երևան, 2014, էջ 112-126:
4. Թարխանության ձևերը և ապահարկումը Արևելյան Վրաստանում (XVI-XVIII դարեր), Պատմաբանասիրական հանդես, № 1 (195), Երևան, 2014, էջ 114-122:
5. Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները Արևելյան Վրաստանում (XVI-XVIII դդ.), Կանթեղ, № 2-3 (59-60), Երևան, 2014, էջ 181-196:

МАРКАРЯН ГОР АРАРАТОВИЧ

МОНАСТЫРСКОЕ ЗЕМЛЕВЛАДЕНИЕ И ПОДАТНОЙ ИММУНИТЕТ В ВОСТОЧНОЙ ГРУЗИИ В XVI-XVIII ВЕКАХ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02- «Всемирная история».

Защита состоится 25-го ноября, 2014 г, в. 15:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Изучение монастырского землевладения и податного иммунитета в Восточной Грузии имеет важное научное значение с точки зрения исследований экономических и политических процессов и роли церкви в Грузии. Исследование позволяет проанализировать особенности феодальных отношений в Грузии, изучать церковь как одну из крупных феодалов, выявлять особенности монастырского землевладения, право церкви над своим имуществом и крепостными, представлять виды церковного имущества, способы их приобретения и дальнейшего использования. Особый интерес представляет исследование взаимоотношений духовных и церковных властей (с одной стороны между Грузинской церковью и местными правителями, с другой-между церковью и шахским двором Ирана) и влияния этих отношений на развитие монастырского землевладения и применения податного иммунитета. Особую важность имеет изучение податного иммунитета, его проявления и воздействия на развитие феодальной системы Восточной Грузии. Вековые добрососедские тесные связи между армянским и грузинским народами и тот факт, что Армянская церковь была представлена в Восточной Грузии и тоже имела там свои поместья и своих крепостных, также подчёркивают важность исследования этой темы.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и двух приложений. Во введении обоснована научная актуальность, отмечена научная новизна, а также дан краткий анализ использованной литературы.

В первой части **первой главы (Взаимоотношения светских и духовных властей в Восточной Грузии в контексте формирования монастырского землевладения)** приведен краткий обзор истории грузинской церкви, подчёркнуты знаменательные события (от принятия христианства до окончательного отделения Бичвинтского католикосата от Мцхетского престола), имевшие воздействие на развитие монастырского землевладения и податного иммунитета. Среди этих знаменательных событий представлены принятие христианства и становление Грузинской церкви, приобретение автокефалии усилиями царя Вахтанга Горгасала, расширение влияния церкви и духовных центров, формирование монастырского землевладения в VI веке, церковный разрыв между армянской и грузинской церквями, арабская гегемония в Грузии, возрождение грузинской государственности в XI веке усилиями Баграта IV (1027-1072), церковные реформы Давида (1089-1125) и царицы Тамары (1184-1213) и

процветание монастырского землевладения в XI-XIII вв., гегемония ильханидов и ослабление влияния церкви, царствование Георгия V (1314/18-1346) и его усилия на возобновление былой мощи церкви, нашествие войск Тамерлана, экономическое и политическое ослабление Грузии в XIV-XV вв., строительная и восстановительная политика царя Александра I (1412-1442), окончательное раздробление Грузии на отдельные царства Имеретии, Картли и Кахетии, отделение Бичвинского (западно-грузинского) католикосата от Мцхетского католикосата. Вторая часть первой главы представляет исследование взаимоотношений духовных и светских властей в Восточной Грузии. Правители Восточной Грузии-цари Картли и Кахетии, осознавая роль церкви в жизни Грузии, всячески поддерживали церкви: дарили поместья, крепостных, деревни и много других богатств, давали церкви право на податный иммунитет, наделяли духовную власть судебными, военными, политическими полномочиями и привилегиями. Грузинская церковь имела свои собственные суды, католикосы и епископы наделялись правом возглавлять военные отряды из своих крепостных, а как феодал церковь пользовалась независимостью. В свою очередь, церковь поддерживала светскую власть в централизации государства, являлась опорой для него и поддерживала его в трудные минуты, являлась гарантом духовной целостности страны, пресекая сепаратные движения отдельных диоцезов в Кахетии и Самцхе Сатабаго. Несмотря на то, что Картли, Кахети были отдельными политическими единицами, они находились под властью Мцхетского католикосата. Но иногда между духовной и светской властями возникали разногласия и столкновения интересов, которые имели за собой серьезные последствия: гонения на представителей церковной власти, заговоры, отстранения католикосов от должностей, присвоение монастырских имуществ. Во второй половине XVI в. Восточная Грузия оказалась под властью Ирана, предводителям Грузинской церкви пришлось строить свои отношения с шахами Ирана. Шахский двор проводил двусмысленную политику по отношению к церкви. Шахи, с одной стороны, покровительствовали церкви, дарили вакфы, назначали жалованье католикосам и гарантировали неприкосновенность монастырских имуществ, но с другой стороны, осознавая роль и значение церкви, всячески пытались вмешаться в её жизнь и, начиная с начала XVII в. принимали участие в выборе и утверждении мцхетских католикосов.

Вторая глава (Монастырское землевладение в Восточной Грузии в XVI-XVIII веках) работы разделена на две части. В первой части на основе анализа купчих, дарственных грамот и других документов дано описание монастырского имущества, представлены его виды, способы приобретения и сохранения как монастырскую собственность. Грузинская церковь являлась одним из крупных феодалов Восточной Грузии. Первое место среди духовных центров как землевладелец занимал Мцхетский католикосат. Анализ документов показывает, что в XVI-XVIII веках мцхетскому католикосату принадлежали примерно полсотни деревень, сотни крепостных, ларьки, мастоженные пункты, крепости, виноградники, пастбища, жилые помещения, красильни, мастерские, мельницы. Часть этого богатства представляла собой складывавшуюся в течении веков собственность церкви, другую и основную часть церковь приобретала в виде даров со стороны восточногрузинских правителей, кроме того, предводители церкви сами заботились о расширении земель церкви и приобретали их в виде покупок. Кроме католикосата, отдельные епископства и монастыри имели свои поместья и деревни, которое приобретали как со стороны правителей Грузии, так и местных княжеских домов. В Восточной Грузии свои поместья и другое имущество имели и

Армянская церковь, Константинопольская и Иерусалимская православные церкви. Армянской церкви-Эчмиадзинскому Престолу, монастырям и церквям Севана, Ахпата, Санаина, Гегарда здесь принадлежали деревни, земли, дома, ларьки. Во второй части второй главы представлены особенности грузинского крепостного класса, монастырские крепостные и сословие дворян Грузинской церкви. Важно заметить, что крепостное сословие Восточной Грузии отличается от известного понимания этой реалии, потому что в грузинском крепостном классе было несколько разделений крепостных: глехи (крепостной), мона (купленный крепостной), нацкалобевы (дарственный крепостной), богано (бедный крепостной), хизани (беглый крепостной) и др., которые отличались друг от друга как экономическим состоянием, так и правами и обязанностями перед своими господами. Важно заметить, что особенностью грузинских феодальных отношений являлось то, что крепостной тоже мог иметь своего крепостного. Крепостные были второй важной частью монастырского имущества. Монастырские крепостные платили налоги церкви, исполняли безвозмездно оброчные работы и являлись для церкви социальной опорой. Большим количеством крепостных владел мцхетский католикосат, который имел крепостных как в деревнях, так и в городах Восточной Грузии.

В третьей главе (Податной иммунитет в Восточной Грузии) работы представлена податная система позднефеодальной Восточной Грузии и проанализирован податной иммунитет как явление и часть феодальной структуры Восточной Грузии. Изучение податной системы обосновывается дальнейшим анализом податного иммунитета, исходя из того, что, не имея представления о грузинской податной системе, невозможно изучать явление об освобождении от податей. В первой части этой главы приведен список исследованных налогов, проанализировано их применение в грузинской среде. Податная система Восточной Грузии представляла собой пеструю смесь как местных видов налогов-кодис-пури, кулухи, сепеоба, махти, самаспиндзло, саруе, так и заимствованных из арабской, монгольской, византийской, иранской фискальной системы-бегара, мали, улаки, улуфа, сурсат, саури и т.д. Кроме того, существовали и церковные подати-саканоно, сахуцо, драма. Надо заметить, что церковь в своих владениях могла взимать как церковные, так и вышеперечисленные налоги. Во второй части главы проанализировано явление податного иммунитета в Грузии, которое было известно под термином «тарханство». Тарханство подразумевало освобождение от налогов и обязанностей и даровалось как людям, так и поместьям. Изучение этого явления сделано со сравнительным анализом податного иммунитета в средневековых феодальных системах сопредельных с Грузией стран (Армения, Византия, Иран). Существовало несколько видов тарханств: полное (освобождающее от всех налогов), частичное (от нескольких налогов), временное (например, сроком на год). Тарханство, освобождая от податей, даровало привилегированный статус, и им пользовались как светские, так и церковные феодалы. На основе анализа тарханских грамот XVI-XVIII вв. показано, что податной иммунитет широко применялся по отношению к монастырским владениям, даровался местными правителями, и регулярно со стороны предводителей грузинской церкви предоставлялся царям на подтверждение, что подчёркивает важность тарханства для Грузинской церкви, потому что эта привилегия способствовала экономическому развитию монастырского землевладения, а с освобождённых от государственных налогов церковных крепостных и поместий церковь продолжала взимать те же налоги. Надо заметить, что тарханство в Восточной Грузии предоставлялось и Армянской церкви со стороны грузинских царей.

В заключении обобщены следующие результаты и заключения диссертации. В течении XVI-XVIII вв. монастырское землевладение достигло пика своего развития. Грузинская церковь являлась одним из крупных феодалов страны, которому принадлежали десятки деревень, сотни крепостных, огромные участки земель, крепости, таможенные пункты, мастерские и т.д. Экономическому развитию церкви способствовало дарованное ей местными правителями право податного иммунитета. Наряду с недвижимым имуществом и крепостными богатство церкви пополнялось доходами от взимания налогов. Развитию монастырского землевладения способствовали и складывавшиеся благоприятные отношения церкви со светскими властями и присутствие сильной привилегированной духовной власти.

GOR ARARAT MARGARYAN

MONASTIC LANDOWNERSHIP AND TAX IMMUNITY IN EASTERN GEORGIA IN XVI – XVIII CENTURIES

The defense of the dissertation will take place at 15:00, on 25th of November of 2014, the meeting of the Specialized Council 006 “World History” at the Institute of Oriental Studies of the NAS RA.

Address: Yerevan, 0019, M. Baghramyan Ave., 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World History” 07.00.02

SUMMARY

The study of the monastic landownership and the tax immunity in Eastern Georgia has an important scientific value from the point of view of researches of the economic and the political processes and the role of the church in Georgia. The research allows to analyze the features of the feudal relations in Georgia, to study the church as one of the largest feudal lords, to expose the features monastic landownership, the rights of the church above the property and serves, to present the types of the church property, the methods of their acquisition and their further use. Particular interest presents the research of the mutual relations between the spiritual and the secular authorities (between the Georgian church and local rulers, and between the church and the shah court of Iran) and the influence of these relations on development of the monastic landownership and the application of the tax immunity. The study of tax immunity has a special importance, his display and affecting development in the feudal system of Eastern Georgia. The age-old good-neighborly close connections between Armenian and Georgian people and the circumstance that the Armenian church was presented in Eastern Georgia and had the manors and serves there too, underline also the importance of the research of this theme.

The dissertation consists of the introduction, three chapters, the conclusion, the list of the used literature and two applications. The scientific actuality is reasonable in introduction, the scientific novelty is marked, and also the short analysis of the used literature is given.

In the first part of the first chapter (**The relationships between spiritual and secular authorities in Eastern Georgia in the context of the forming of monastic landownership**) the brief review of history of the Georgian church is resulted and the significant events which had influence on development of monastic landownership and tax immunity are underlined (from adopting Christianity to the final separation of catholicate of Bichvint from throne of Mtskheta). Among these

momentous events the adopting christianity and becoming of the Georgian church, acquisition of autocephaly efforts king of Vakhtang Gorgasal, expansions of influence of church and spiritual centers, forming of monastic landownership in the VI century, church break between Armenian and Georgian churches, Arabic hegemony in Georgia, revival of the Georgian state system in the XI century efforts of Bagrat IV (1027-1072), church reforms of David (1089-1125) and of queen Tamara (1184-1213) and prosperity of monastic landownership in XI - XIII вв., hegemony of Ilkhans and weakening of influence of church, reign of George V (1314/18-1346) and his effort on proceeding in former power of church, invasion of troops of Tamerlan, economic and political weakening of Georgia in XIV - XV вв., building and restoration politics of tsar of Alexander I (1412-1442), final breaking up of Georgia on the separate reigns of Imereti, Karthli and Kakheti, separation of catholicate of Bichvint (western Georgian) from catholicate of Mtskheta are presented.

The second part of the first chapter presents the research of the mutual relations of the spiritual and the secular authorities in Eastern Georgia. The rulers of Eastern Georgia-kings of Karthli and Kakheti realizing the role of the church in life of Georgia, supported churches in every way: they gave manors, serves, villages and many other riches, they gave to the church a right on immunity of taxes, which is provided with the spiritual judicial power, soldiery, political plenary powers and privileges. The Georgian church had his own courts, catholicoi and bishops were provided with the right to head soldiery detachments from the serves, but as a feudal lord the church used the independence. In turn a church supported the secular power in the centralization of the state, and supported him in difficult minutes, was the guarantor of spiritual integrity of country crossing separate motions separate dioceses in Kakheti and Samtskhe Saatabago. In spite of the fact that Karthli and Kakheti were the separate political units, they were under the power of the catholicate of Mtskheta. But sometimes between the spiritual and the secular authorities had disagreements and conflicts of interests had after itself serious consequences: persecutions on church public agents, plots, removals of catholicoi from positions, appropriation of monastic property. In the second half of the of XVI century Eastern Georgia appeared under the power of Iran and the leaders of the Georgian church were building the relationships with the shahs of Iran. The shah court brought the ambiguous politics for the relations of church. Shahs from one side patronized to the church, gave vakf, appointed a salary to the catholicoi and untouchable monastic property guaranteed, but on the other hand, realizing the role and value of the church, in every way tried to interfere in her life and beginning of XVII century took part in a choice and claim of catholicoi of Mtskheta.

The second chapter (**Monastic landownership in Eastern Georgia in XVI-XVIII centuries**) of the work is divided into two parts. In the first part are presented

the monastic property, his kinds, the methods of acquisition and its maintenance on the basis of analysis of deeds of purchase, donative deeds and other documents. The Georgian church was one of the largest feudal lords of Eastern Georgia. First place among spiritual centres as a landowner occupied catholicate of Mtskheta. The analysis of the documents shows that in XVI - XVIII centuries the catholicate of Mtskheta belonged approximately half of hundred villages, hundreds serves, stalls, custom points, fortresses, vineyards, pastures, dwellings apartments dyeings, workshops, mills. Part of these riches was folding in the flow of centuries property of the church, the other and basic part of the church property were acquired as gifts from the Eastern Georgian rulers, in addition, the church leaders cared of expansion of earth of church acquired them as purchases.

Except catholicate the separate dioceses and monasteries had also the manors and villages, which were acquired from the rulers of Georgia and the local princely houses. In Eastern Georgia the Armenian church Constantinople and Jerusalem orthodoxy churches had also the manors and other property. In Eastern Georgia the villages, land, houses, stalls belonged to the Armenian church: the Throne of Ejmiadzin, the monasteries and churches of Sevan, Haghsat, Sanahin, Geghard. The features of the Georgian serfdom are presented in the second part of the second chapter, the monastic serves and noblemen (aznaurs) of the Georgian church. It is important to notice that the serfdom of Eastern Georgia differs from the well-known conception of this reality, because in the Georgian serf class there were some divisions of servs-glekhi (serf), mona (bought serf), natskalobevi (donative serf), bogano (poor serf), khizani (fugitive serf) and other. They are different from each other by their economic state. It is important to notice that the feature of the Georgian feudal relations is that a serf could have himself a serf too. The serves were the second important part of monastic property. The monastic serves paid the taxes to the church, carried out gratuitously works and were a social support for the church. Plenty of serves were owned by catholicate of Mtskheta, which had serves both in the villages and in the cities of Eastern Georgia.

In first part of the third chapter (**The tax immunity in Eastern Georgia**) the fiscal system of late feudal Eastern Georgia is presented and analyzed the tax immunity as a phenomenon and part of feudal structure of Eastern Georgia. The study of the fiscal system is grounded by the further analysis of tax immunity, because the ignorance of the Georgian fiscal system makes impossible to study the phenomenon of the release from taxes. In the first part of this chapter the list of investigational taxes is presented and studied their application in the Georgian environment. The fiscal system of Eastern Georgia is a mixture as local types of taxes- kodi-puri, kulukhi, sepheoba, makhti, samaspindzlo, sarue, also adopted from Arabic, mongolian, Byzantine, Iranian fiscal systems-begara, mali, ulaqi, ulupha,

sursat, sauri etc. Besides the church taxes existed too: sakanono, sakhutso, drama. It is necessary to notice that the church in the possessions could raise both church and above-stated taxes. In the second part of the chapter the phenomenon of tax immunity in Georgia is analyzed, which was known as the term of tarkhnoba. Tarkhnoba implied the release from taxes and duties and granted to both the people and manors. The study of this phenomenon is done with the comparative analysis of tax immunity in the medieval feudal systems contiguous between the Georgia and the other countries (Armenia, Byzantium, Iran). There were a few kinds tarkhnoba-complete, (exempting from all taxes), partial, (from a few taxes), temporal (for example by a term in a year). Tarkhnoba, releasing from taxes, granted the privileged status and was used by the secular and the church feudal lords. On the basis of analysis of tarkhan deeds of XVI – XVIII it is shown that tax immunity was widely used for the monastic possessions, granted to them by local rulers and by the leaders of the Georgian church it presented regularly to the kings for the confirmation. This underlines importance of tarkhnoba for the Georgian church, because this privilege assisted economic development of monastic landownership, and it exempted the church serves and manors from the state taxes, but the church continued to raise the same taxes. It is necessary to notice that tarkhnoba in Eastern Georgia was also given to the Armenian church by the Georgian rulers.

Next results and conclusions of the dissertation are generalized in the conclusion.

In the flow of XVI - XVIII the monastic landownership achieved the peak of its development. The Georgian church was one of the large feudal lords of country, which owned ten of villages, hundreds of serves, enormous areas of land, fortresses, custom points, workshops etc. The economic development of church was assisted right for tax immunity given by the local rulers. Along with the real estate and serves riches of church were filled up by the levy of taxes. The development of monastic landownership is folded by the favorable relationships of the church with secular authorities and by the presence of the strong privileged spiritual power.